

ԲԱԺՆԻԳԻՆ

Ի Պոլսկարիա

Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Ամերիկա

2 Տոլ. 30 սենդ

ՍԱՆԻՏԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅՍՆԴԵՍ. ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿՍՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՎ. 13 ՇԱԲԱԹ 1901

ԹԻԻ 195

ԿԸ ԳՐԷ՝ ՈՒ ԿԸ ԳՐԷ՝

Տարտամ ու մութ նայուածքի մը բոլոր անբացատրելիութեամբ, ինք իր մէջ կորսուած, անորոշութիւնով լեւի լեցուն և պարապութեան անդունդին մէջ սահմուկող հէգ արարածի մը բոլոր արգահատանքը չը հրաւիրե՞ր իր վրայ սաղազար տղեկը, որ գրասեղանի մը առջև կը կըտամ կը գրէ՝ ու կը գրէ՝, առանց ինքզինքին ներելու որ գոնէ մէկու մը անգլխակից շնորհաւորութեանը արժանանայ օր մը: Խեղճը, ատոր յոյսն անգամ չունի:

Վախ մը կայ իր մէջ և այդ վախը խորունկ ազիտութեան շնորհիւ զինք հալածող վիթխարի ուրուականի մը պէս ձեռքը անոր օձիքին վրայ գրած անբաժան արհաւիրքը դարձած է անոր բոլոր գրական արտադրութիւններուն:

Ան ատեն միայն չզգար ոչ յօնքի պոստում և ոչ ալ ճակտի մօայլ՝ դիմագծային ազ. միմիկ տափակութիւնը, երբ իր գրական լըրճածները չը հանգպին քննադատութեան անողորմ փոթորկին, որին առջև ի հարկէ քրեք քրեք պիտի ըլլային անոնք և վարադոյրին ետին պառկած պարթև տգէտը նշաւակի դարձնէին աշխարհի ծագրանքին:

Օխ, կը գրէ՝ ու կը գրէ:

Եւ փառք Աստուծոյ, ինչ մեծ բարեբաղդութիւն, քննադատութեան ոչ միայն փոթորիկը, այլ հոյն անդամ չ'անցնիր անոր մեկանի ճահիճներուն վրայէն, որոնք ալ կսկսին ներսիլ ու մարդկային ոչ մէկ քմայքին հաճելի դառնալ:

Ի այդ կը գրէ՝ ու կը գրէ:

Ճահիճը կը հոտի. հովը կը պակսի ու տառադարձութեան մը բոլոր ծիծաղելութեանը տրժանապէս մատնուած ատ ողորմելի մրոյը երբէք պատիւը չունենար ապտակ վայելելու, որ թերեւ փրկարար դեր մը կատարէր իրեն՝ այլուր փընտրուելու հարկադրելով իր արդար հացը:

Շուրջ ճարտարագետին բոլոր խոշորութեամբը, ուրագի չափ հաստ գրչով և լեզուի նպատակաւոր կեղծարարութեամբ կուռքի նմայչներ կը նետէ մէջ տեղ և ա՛յն վայելուց ատ կուռքերուն թեկին կ'ապաստանի, իր անորոշութիւնը սփոփելու և իր աչքին ուրուականացած յօնքի պոստումին չ'ենթարկուելու համար:

Ու յետոյ.

Յետոյ դարձուր պատկերէն մ'ես կողմը և խոշոր քթի մը վրայ պլպլացող աչքի քառակիւն ներքե տե՛ս մտքի ուրիշ պարապ մըն ալ, որ նոյնպէս կը գրէ՝ ու կը գրէ:

Սրերով կը նստի բառի ու բառարաններու վրայ. կը թարգմանէ և ֆրանսական հզօր միտքի մը գեղեցիկ արտադրութիւնը իր մտքին հաւասար տափակութեան մը իշեցնելով, կը նետէ մէջ տեղ... ու անոր տակ իբր հեղինակ իր ստորագրութիւնը դնելու խղճմտութիւնն ալ կուենայ...:

Հոգ չէ՛, ճահիճը կը հոտի և հով չը կայ:

Թուղթին երեսը կը շարտէ բառի դէզեր ու անդամատուած նախադասութիւններու խղճալի շարքեր, որոնց մէջ գաղափարական ատ մրոյը ոչ միայն ինք կը կորսուի, այլ կը կորսնցնէ բոլոր իրեններն ալ, որ սակայն ողբալի կորուստներ չեն: Գաղափարները հոն փաշտիլ կը խողան: Վիզալին՝ է՛ն ընտրուած ձեւն է, որ հրաշալի ցատկընտուքով մը տեղափոխութեան անգլմագրելի հաճոյքը կուտայ անոր: Երէկուան ենթական այսօրուան սեռի խնդիրն է և ատոնց մէջ սկզբունքը Գամէլիօնն է ամեն հոլովով հոլովուած:

Աստուած միայն գիտէ թէ ինք իր գրչէն թէ գրիչէ իրմէ կը կառավարուի, մինակ շիտակ է, որ կը գրէ՝ ու կը գրէ, առանց խղճի վրդափում մը զգալու թէ հանրային մտքին առաջնորդն ըլլալու կոչումն ունի ինք. . . .

Հոգ չէ, թող գրէ, ճահիճը կը հոտի և հով չը կայ:

ԹՕՏԻՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԴՐԱՄՕԺԻՏԸ

Երկու դասակարգ միայն ախորժով պիտի կարգան մեր գրութիւնը, առաջին՝ աղջիկներով քո զիջիք և գրամով նեկաթիմ ծնողք, երկրորդ՝ գործով շատ հաճիք և անկուտիութեամբ անթիւ փեսայուք:

Նախորդները, գրամօժիտին ո՞րչափ սին և աւելորդ ըլլալն հաստատող վարդապետութեան մը տենչով, այլք՝ գրամօժիտին իբրև Տառնաբանեայ տախտակէն մոռցուած Աստուածային նոր պատուէր մը լսելու անհուն փափաքէն մղեալ՝ պիտի կարդան անշուշտ:

մակայն ո՛չ: Մեր նպատակը չէ՝ ո՛չ ներքողել ո՛չ պարտաւել զայդ, քանի որ այդ սովորոյթին, այդ նորելուկ կանոնին և գրութեան փաստերը կամ օգուտն ամէն օր մեր շուրջը կը բզզան տեսակ տեսակ գոյներու տակ, որոց ի տես մարդ խրատականի պէտքէն կրնայ ազատիլ, նկատելով որ երբեմն բարի կարծուած խրատականներն ալ ժամանակին ընթացքին մէջ կրնան գոյն փոխել, տեղի տալով աւերիչ չարին:

Նախ ըսենք թէ գրամօժիտը, որ ամուսնութեան ճիշդ փորձաքննի կը սեպուի, այնքան արմատացած է մեր բնութանեկան խաւերու մէջ, որ համեստ ենեալ մը, մտածելով թէ չպիտի կրնայ վճարել իր աղջկան գինը, գլխիկոր և ամօթահար կը մնայ զաւկին առջև՝ տկարացած դառնեայով ինքզինքն հայրական սրբազան պարտականութեան մէջ: Որովհետեւ աղջիկ զաւկի մը համար քանի մը հարիւր ոսկի աչքէ հանելը, ճիտի պարտք պատուած է հիմա. . . . Աւ ինչո՞ւ. . . . ինչո՞ւ հայր մը ամօթով մնայ իր զաւկին դէմ. . . . ինչո՞ւ:

Որովհետեւ կարող չէ իր զաւկն ամուսնացնել ըստ արդի բիացային, էնքը չունի խնդրուած գումարը, որով պիտի կարենար փեսի մը ինը դրպանը լեցնել այն հատիկներով, որոց ամէն մէկն աշխատութեան և ճակտի քրտինքը կը ներկայացնեն. . . . Խնդիրը կը մնայ, հրեայ ֆու-

թիկներու ձեռքին մէջ թռչող գոյնզգոյն թրղ-թիկներու բախտին, որ երազէ մը անդին չանցնիր. . . . Աղջիկը կը մնայ տան անկիւնն յուսահատ, և մէն մի տարի դուցէ ճերմակ մը կը ձգէ իր մաշերուն մէջ, և այսպէս ապագայ մայրը խամի կը թառամի պատուհանին ետին՝ հեռուէն գիտելով խաբուսիկ ու սին աշխարհը:

Իսկ մանչ զաւակաց տէր հայրեր, կրնան ինք բարձրն՝ ըստ հաճոյս (և իրաւունք ալ ունին) կը մտածեն թէ անոնց ապագան՝ գրամագլուխը, գործը՝ բախտը մտածող աներ պապաներ կան ու կը գտնուին միշտ որք յօժարակամ պատրաստ են իրենց զաւկին յանձնել կին մը և փայլուն ապագայ մը. . . . Ի՞նչ անոյշ սովորութիւն. . . .

Աւրեմն ի՞նչ պէտք է դպրոցները գրասեղաններու վրայ բանթալոն և դաստակ մաշկցնել, աչքի լոյս թափել, հալըր ու մաշիլ գիտութեան և ուսման ասպարէզին մէջ. . . . և անհամար ծախքերու մատնուիլ մանչ զաւկի մը ապագային համար, քանի որ աղջկանց հայրեր պատրաստ են և յօժար իրենց փեսին ապագան վճարել, համեստ գրամագլուխ մը յանձնելով անոնց ի հարկին. . . .

Հարիւրներով ոսկիներ համրող ո՞ր հայրը կամ ծնողքն հարցուցած է իր փեսացուն ուսման կարողութիւնը. . . . Ո՞ր փեսին հարցուած է թէ արդեօք գիտէ՞ երեք անժանօթ ալճէպրայի խընդիր լուծել, թէ Ամալուն գետին ծագումն ուրկէ՞ է, թէ երեք ամիս Լոնտոնի վրայ չէք մը այսօրուան հրապարակին վրայ քանի՞ կարծէ, թէ Յուլիոս Կեսար քանի՞ տարեկան մեռած է, վերջապէս թէ ասկէ Բարիդ քանի՞ քիլոմետր է. . . . Երբէք. . . . Այլ կայր զկուրայն, բաւական է որ նոր քոստիւմ մը ըլլայ կոնակը, ոսկի ակնոց մը փայլի քթին վրայ և պօթերն ալ կանթ ըլլան, ալ ընտանեկան շրջանակներու մէջ բերնէ բերան կը խօսուին. . . .

— Մեղայ, պուշերու պէս հագուած, կէսն պըլ տիկ տղայ, հէմ ալ գիտնական ըլլալու է քիկէօզլիւքը աչքէն չիյնար կոր, կարգալէն աչքերը եօխ է ըրեր, կուստօլու ոտքի ամաններ մը քի սիւլիւնի պէս. . . .

Բայց դիրքը. . . . երկրորդական կը մնայ, հերիք է որ առաւօտուն փողոցէն անցնի դաւադանը ճոճելով և իրիկուան դառնայ ձեռքը լրագրի ծրար մը բռնած. . . .

— Մեղայ, տունը տեղը նայողը ան է, ամէն իրիկուան բաքէթ բաքէթ կը կրէ. . . . Խոմէթ օր ըսես նէ ասանկ ըլլալու է, Աստուած տիւշմանիս աղջիկը ասանկներու լայլիս ընէ:

Եւ տհա ախպէս քանի մը անուս և միամիտ կիներու բերնով, հարիւր յիսուննոց գրագիրը քի-

ճար Կոնստանտին Կարժանանայ շնորհիւ կանթ պո-
թերուն և ոսկի ակնոցին . . . Ոսոր համար է որ
արդի երկտասարդները հացէն կը զրկեն հա-
գուտի կուտան, մտածելով որ սոսկ արտաքին
փայլն է որ զիրենք պիտի ծախէ: Օրինակները
շատ հեռու չեն: Դեռ անցեալ օր Միւսիւ Բ. որ
երկու հարւր յիսուն զրշնոց պարզ գրադիր մ'էր,
երեք հարիւր ոսկիով ամուսնացաւ և հիմայ կոկիկ
գրամագլուխով մը ֆոնիսիօնէն ելած է, այս ինչ
խանը, այս ինչ թիւը սենեակը և շատ շաւ կապ-
րուի . . .

Ուրիշ մը որ վաճառականի քով գնա-եկուրի
պաշտօն ունէր երկու հարիւր զրուշով եկու
հարիւր կարմրութեամբով ամուսնացած է և այդ
գրամագլուխին իր քաղցրօնին բնթացիկ հաշուոյն
խառնելով, այսօր իր անունը Քիւմային մէջ կը
կարդացուի:

Երրորդ մը իր առած հինգ հարիւր ոսկի գը-
րամօթիտի աստուածային շնորհիւ, պղտիկ վաճա-
ռական մը դարձած է և ապագայ կը խոստանայ:

Եւ կը մոռնան նոյն ատեն յիշել թէ շատեր ալ
իրենց պանծած գրամօթիտը պարտք յատկացը-
նելով, քանի մը շաբաթէն չար հարսի մը կմախ-
քը միայն ունեցած են դէմերնին, որ բերած
գումարին յենելով կողմնակա անվերջ հեղեղ
մը թափած է ամուսնոյն գլխուն: Իրաւ է թէ
յետ պսակի արարողութեան սպիտակ կանթերը
սնտուկը կը մոռնան, քահանան խուցը կը քաշ-
ուի, գրամներն հոս հոն վառնուելով կը հալւն
սոսկալի պարապ մը ձգելով մէջտեղ, ուր հարսը
քստմնելի ծիծաղով մը միշտ կերևայ իր լեմոնի
ծաղիկներուն մէջ, մատնանիշ ընելով ապագայի
ապրուստը, այդ բարակ թելն որ երկու գլուխնե-
րը զիրար կը կապէ՝ չլթայէն շատ ամուր է ար-
դարեւ և միմիայն մահուան մանգաղը կրնայ
կտրել զայն . . . Դրամօթիտն որչափ անուշ աչն-
չափ կ'ոռ հետևանքներ կրնայ յառաջ բերել
ժամանակին ընթացքին մէջ:

Անկուտի և անգործ երիտասարդին համար գը-
րամօթիտը նոր աշխարհ մ'է, ուր արեւը շատ շուտ
մարը կը մանէ տեղի տալով քստմնելի խաւարին,
և գիտենք թէ խաւարի մէջ քալող մը որչափ ձա-
խողութեանց կրնայ ենթարկուիլ: Կինը թէպէտ
լապտեր իր ձեռքին մէջ, սակայն գրամը իւզն է, և
առանց անոր լոյս չկայ:

Պէտք չէ խաբարիլ գրամօթիտի վաղանցուկ փայ-
լէն, անիկա առուպի մը պէս կանցնի ձեր աչքի-
րէն, սե հետք մը ձգելով ձեր անփորձ ճակտին
վրայ: Եթէ գրամ ունիք, գրամ պահանջեցէք,
իսկ եթէ ուսում ունիք, ուսեալ փնտռեցէք, ձեր
գրամագլուխը, եկած գրամօթիտին հետ գիրկընդ
խառն, Քոռդիւն մը կրնայ չինել, ինչպէս ձեր

ուսումը, հանգէպ ուսեալ և կերթ օրիորդին,
կրնայ ուսմանալ և այդ գիրկընդխառնումին ա-
նուշ պտուղները ձեր ծերունի ապագան կապա-
հովեն:

Վ. ֆ.

ՀԵՌԱՅՐԱՅԱՆ

Աժանա Բոժոժիկ և Ընկ.

Քամչաթքա

Պատուելի գրագէտի մը յայտարարածին
վրայ թէ «նսնդեն ու ճարսոս պատրիարք մը ու-
նինք», որոշուեցաւ ընդեղէն ու զարդավաթե-
ղէն ալ կաթողիկոս մը ունենալ:

Բուսճուք

Տեղւոյս հայ ընթերցարանը խաղատան մը
ձեւ առած է, ուր Ազգ. վարժարանի ուսուցիչ-
ները օրուշ պիտի կը խաղան: Կըսուի թէ ուսանող-
ներն ալ իրենց գաստիարակներուն այս բարի օ-
րինակին հետեւելով «վենդէ Եօն» պիտի սկսին
խաղալ:

Ու տակաւին չար լեզուները կըսեն թէ տեղ-
ւոյս վարժարանին ուսուցչական մարմինը իր
պաշտօնին վեհութեանը գիտակից տարրերէ չի
բաղխանար:

Քամչաթքա

Տարօրինակ տեսարան մը պարզուեցաւ անց-
եալ կիրակի իրիկուն Սանդրալի թատերասրահին
մէջ. ներկայացման միջոցին՝ օթեակի մը առջև՝
րամագլուխ խանսիդի պէս կը շարուէին դարեջը-
րով լեցուն գաւթներ, որոնց փրփուրները վա-
րը նստողներուն վրայ կը կաթկթէին: Աւելի
զարմանալին սա էր որ այդ օթեակի բնակիչնե-
րը լաւ գիտէին թէ թատրոնը բարոյական դըպ-
րոց մ'է և ոչ թէ նիգօլիէն կապէլան . . .

Թոնքին

Կաղանդին Բ. օրը մասնաւոր վարժարանի
մը տնօրէնը իր աշակերտները վառտեց, առջի օ-
րը պախշիջ տարած չըլլալուն համար, ահաւա-
սիկ իւր խօսքերը. «Պարոններ, երէկ ինչո՞ւ չե-
կաք. հայտէ՛ կորսուեցէք»:

Մալակա

Երիտասարդ մը նշանուած միջոցին չափէ
գուրս ուրախութենէն շուարեալ՝ հետեւեալ խօս-
քերը ուղղեց օրիորդին. «Միս, մշտինէ խուրմա-
սի քնթիդ խուրպան. իս իապուլ տի անի՞ս մի,
օրը օրա մի հաց տի բերիմ քեզի»:

ԻՆՉ ԱՂԷԿ ԿԸԼԼԱՐ ԵԹԷ ՎԵՐՆԱՅԻՆ

- Ծխախոտին մէջէն փռւչն ու յետոյնքը.
- Լրագրաց մէջէն սուտ ու փուտ լուրերը.
- Խաչուէին մէջէն նոսրութիւնք.
- Օրորոգներուն երեսէն իւրաքանչիւրը.
- Խաֆաք իշի մոխրաւոր սօրմաւի բօթիները.
- Թաղականներու մենծ աղալութիւնները.
- Պուկարահայ վարժապանաց հիմակուան անշահեմեմեմեմեմ մէթոտը.
- «Արմէնիա»ի մէջէն սպառած գիրքերու ցանկը.
- Շարժումի Պոլսոյ թղթակցին երբեմն տուած անմարսելի լուրերը.
- Իրաւունքի չլծարող բաժանորդացը ուղեւալ երկայնապատում ազդարարութիւնները.
- Շաւիղի «գիտական» խորագրին տակ հրատարակած քնաբեր յօդուածները.
- Օթլախի լրագիր կարգացողները.
- Փամբ անգամ մը իրարու յաջորդող կանանց մօտաները.

ՌՈՒՍՏՈՒԿ

ԱՅՐԾԷՆ

ԶԱՆԱԶԱՆՔ

Քրուքի նոտերը. — Աշխարհածանօթ Քրուքի գործարանին տէրը 75,000 անգլ. ոսկի նուէր տուաւ իբրեւ կաղանդէք իր բանուորներուն: Այս հիմնալի նուէրն հետեւեալ կերպով բաշխուեցաւ. — 25,000 ոսկին յատկացուեցաւ գործաւորաց հանգստեան սնտուկին. 25,000ն ալ պիտի յատկանայ գործաւորներուն նոր բնակարաններ շինելու, մնացեալ 25,000ն ալ յատկացուեցաւ գրագիրներու և ուրիշ պաշտօնէից հանգստեան սնտուկին:

Աղանակողակոյնները. — Կալկաթայի դատարանը առաջին անգամ մէծօնթիւնի ճառագայթները գործածած է մարդու մը մարմնին մէջ պա՛ռած առարկան գտնելու համար, բայց արդիւնքը շատ ողորմելի եղած է:

Փորձին ենթական մարդ մը մը է որ ամբաստանուած է Կալկաթայի գոհարավաճառներէն մէկուն ցուցափեղկէն 8000 Ռուբլինոց ալիքն 13,000 ֆրանքնոց, ագամանդ մը գողցած եւ կըլլած ըլլալու յանցանքով:

Պէտք է ըսել որ պատահարը շատ հազուադէպ չէ Հնդկաստանի մէջ և գողի վարժարաններուն մէջ (որովհետեւ գողութեան վարժարան

ալ կը գտնուի Հնդկաստանի մէջ) արուեստավարժներուն առանց գոհարութեան ագամանդ կըլլաւ կերպը և զանոնք իրենց կոկորդին մէկ խորշին մէջ պահելու և ապա զանոնք ժամանակին գուրս հանելու կերպը կը սորվեցնեն:

Կալկաթայի մէկ օրաթերթը կը նկարագրէ այդ արդիւնքը ստանալու մէթոտը:

«Ամենէն առաջ արուեստավարժին կաշիի կտոր մը կըլեցնել կուտան որուն առանցքի մը կապուած է. աշկերտը կը վառժուի դիւրութեամբ այդ կաշին կըլեցնու և զայն իր խաչափողին մէջ զետեղելու:

Երբոր կրնայ ալ այդ գործողութիւնը կատարել և իր լեզուին միջոցաւ ալ կրնայ կաշին հանել, զայն կրով կը ծեփեն որն որ խաչափողին խողովը կը մաշեցնէ և կը մեծցնէ. քիչ մը գործնականով և քիչ մ'ալ սովորութիւնով Հնդիկ պուշը կը կարենայ մէկ անգամէն 8-10 Ռուբլի կըլեցնու:»

Խաքեութեան սարսիւնակ միջոց մը յաջեր է ֆրանսացի երիտասարդ մը: Իրպանը ոսկեղօծ պղնձէ մատնիներ լեցնելով կը պտտէր Օբերայի և Մատլէնի հրապարակները: Երբ տեսնէր թէ հտեւէն քիչ շատ շնորհքով հաղուած անցորդներ կուգան, գրպանէն մատնի մը կը ձգէր գետինը: Երիտասարդ մը, որ իր մեղսակիցն էր և ետեւէն կուգար, մատնիին իյնալը տեսնելով կաննէր և կըսէր. «Պարոն ձեր մատնիին է...»: — Բայց ոչ, կը պատասխանէր խաբեբան: Իմ մատնիս ձեռքս է: Ահա: Կերևի թէ ուրիշ մարդու մը ըլլալու է:» Ամէն մարդ կը հաւաքուէր և մատնիին ձեռքէ ձեռք կը պտտէր: — «Քանի որ դուք գտաք ձերն է, կըսէ խաբեբան: Եթէ կուզէք ինծի ծախեցէք:» — Կըլլայ: — Մերձակայ գոհարավաճառի մը խանութին երթանք ու ցուցնենք: Տուէք տեսնեմ:» Ճամբան, վարպետ գողը կեղծ մատնիին փոխելով ճիշդ անոր ձեւն ունեցող ուրիշ ոսկի մատնի մը կը հանէ և ցոյց կուտայ գոհարավաճառին, որ 50 ֆր. կարծեցնէ: Խաբեբան, հետաքրքիրներու հետ փողոց ելնելով, 20 ֆր. կառաջարկէ երիտասարդին: — «Ես 30 ֆր. կուսամ, կըսէ հանդիսատեսներէն մէկը: — Քառասուն, կը պոռայ ուրիշ մը:» Խաղն արպէս կը յաջողի և կեղծ մատնիին քառասուն ֆր. կը ծախուի: Ֆրանսական ոստիկանութիւնն յաջողեցաւ ձերբակալել այս ճարտար գողը:

Ֆրանսայի կիկներն աշխատեցին եւ. — Ֆրանսայի մէջ եղած վերջին վիճակագրութեանէ մը կը հասկցուի թէ 10 միլիոն կիկներէն (քսան տարեկանէ սկսեալ և աւելի վեր) 5,381,069 կիկ իրենց աշխատութեամբ կապրին, առանց հաշուի դնելու

500.000 կրն, որք կալուածներ ունին կամ հա-
տուածու եւն. Այս 5 միլիոն 381069 կանայք
կապրին հետեւեալ միջոցներով. — Բժիշկ՝ 450 .
գրագիրուհի՝ 519 . պատկերհան և քանդակա-
գործ՝ 3.600 . դերասանուհի՝ 3.500 . դայեակ՝
13.000 . մօսխար՝ 30.000 . պաշտօնատանց գրագի-
րուհի՝ 50.000 . կրօնաւորուհի՝ 95.000 . վարժու-
հի՝ հարիւր հազար . վաճառականական պաշտօն-
եայ՝ 245 հազար . հաստ. թառու կին՝ հինգ հար-
իւր հազար . ֆապրիքայի գործաւորուհի՝ 570
հազար . սպասուհի՝ 650 հազար . գերձակուհի՝
950 հազար . երկրագործ գործաւորուհի՝ 2.700.000 .
(Սոյն վիճակագրութիւնը շատ աղէկ կընէր եթէ
իմացնէր նաեւ թէ մնացեալ հինգ միլիոնի շափ
եւայի թուանուհիներն ինչպէս կապրին. Ծ. Խ.)

Զինացող մարդերը. — Զինաստան գացող Գեր-
մանացի սպայ մը դիտելով որ բնիկներուն հիւս-
ուած մազին երկայնութիւնը միջին հաշուով 0,92
հարիւրորդամթիւ է, սա հաշիւը կը ներկայացնէ.
«Զինաստանի մէջ 2 հարիւր միլիոն չինացի
կայ, որոնց մազերուն հաւաքական երկայնութիւ-
նը կըլլայ 184 հազար քիլոմետր, որ կրնայ չորս
ու կէս անգամ աշխարհը շրջանակել»:

Ծ Ի Ծ Ա Ղ

Բարիգի մէջ.

— Կրնա՞ք Քրիսկէրին կառքով անցած ատե-
նը «կեցցէ՛ նախագահ Քրիսկէր» պօռալ:

— Այդ բանը երբէք չեմ կրնար ընել, ո-
րովհետեւ արհեստս բժշկութիւն է:

Ընկերութեան մը մէջ փոքրիկ աղջիկ մը
բարձրաձայն կուլար ու իր դեռատի մօրը կըսէր.

— Մայրիկ, դուն ինձմէ աւելի երջանիկ ես:

— Եւ ինչէ՞ն, հարցուց մայրը.

— Որովհետեւ երբ ահաւաներդ ցաւին՝ վերով
վարով դուրս կը հանես ու հանգիստ կընես:

Ի՞նչ տարբերութիւն կայ գրագետի մը ու
նամակատան ցրուիչի մը մէջ.

— Մէկը իր հացը ճակտին քրտինքովը կը
հանէ, միւսն ալ ոտքին քրտինքովը:

Անգլիական պաղարիւնութիւն:

Օր մը Էրբ Անգլիացի դիտուն մը իր աշխա-
տասրահին մէջ բնագիտական դործողութեամբ
մը զբաղած էր, յանկարծ սպասուհին ներս մըտ-
նելով կը գոչէ.

— Տօքթօռ, տօքթօռ, գնդասեղ մը կ'լլեցի.

Գիտունը առանց խռովելու. — Ահաւասիկ
ձեզի ուրիշ գնդասեղ մը, միայն թէ զիս հան-
դիստ ձգեցէք:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԽՕՍՔ—ԿԱՊ

Տան մը մէջ այր և կին կը խօսակցէին.

Կինը. — Տիրաւոր աղա, Ծաղիկնուս համար
ասօր նորէն եկան, վերջնական խօսք կուզեն
կոր. ի՞նչ կըսես, աղէկ մը հարցուցիր բնտե-
ցիր ես:

Այրը. — Հասկցանք. խելքը գլուխը երիտա-
սարդ մըն է ըսին:

— Անանկ է նէ՛ խրաւէքնիս աս է եղբր ը-
սելով խարարը տանք քի՛ խօսք—կապ պիտի բերեն:

— Ան չէ ամա, ատ խօսք—կապ ըսուածը ին-
չո՞ւ համար կը բերան:

— Անիկա սիրոյ նշանակ է. հէմ աղջկան
թարափը անով էմնիյէթ կընէ տէ ճեհեզին կը
պաշլայէ: Քիւնէս մը առնելու ելլաս նէ՛ մալ տէ-
րը քիչ շատ քեյ մը կուզէ:

— Աս բերելիք խօսք—կապին քանի՞ ոսկի-
նոց բան կը կարծես:

— Ո՞վ գիտէ. Վիրվէքէ ենգաւսէ օլմաղ կը-
սեն. երկու ոսկիէն բռնէ մինչև հարիւր ոսկիի
խօսք—կապ կըլլայ:

— Սանկ քիչ մը աւելի կամ պակաս քանի՞
ոսկինոց բան կը յուսաս որ մեզի բերեն:

— Իրաւոր չիյտեմ ամա՛ կըստօններնուն նա-
յիս նէ՛ կէնէ 3—4 ոսկինոց բան մը պիտի բերեն:

— Ըսել է որ մենք ատ 3—4 ոսկինոց բերե-
լիքնին տէքօզիթօյի տեղ բռնելով 20—30 ոս-
կինոց ճէհէզ մը պիտի շինենք, անանկ չէ՞:

—Վո՛ւյ ճանրմ՝ Տիրատուր ապա, 20—30ին խօսքը՝ կըլլայ. քեզի պէս չէնք շնորհք էսնաֆին կը վալլէ: Գիշէն քիչ 60 լիւրան աչքդ պիտի առնես: Բխրալոյս բաներ ընելով չօճուխիս ճիւղերը ծոռ պիտի ձգեմ:

—Ճանրմ, շաբաթան հաֆիֆ շինել տանք նէ՛ գլխուն ծանրութիւն չի տար ու ճիւղը չի ծռեր... Իմ ըսելիքս ան չէ. մենք 50—60 ոսկինոց ծախքի տակ մտնելու համար մանչուն թարաֆէն 5 լիւրանոց քէյն մը պիտի առնենք:

—Անանկ է. տահա ի՞նչ տային... հիշ բան մը չիտան նէ ի՞նչ կրնանք ընել:

—Աս ալ կայ եա:

—Կէնէ մարդիկը աղնուակտնութիւններն կը ցուցունեն կոր:

—Ճշմարիտ է:

—Ստանկ բաներուն քիչին շատին չեն նայիր. չիւնքիւ միւրովէթէ էնտաղէ օլմաղ:

—Անանկ է:

—Ձաւակդ է, պիտի խարճես. հէմ ետքէն կեսուրը, պարոնտաւը, տալլտանքը, կնքահարն ու կնքամարը մէյմէկ քիչ երեստեսէ կոտան՝ քու խարճածիդ խարչըլը՛ կըլլայ:

—Կուզեն նէ չի տան. Իմ ըսելիքս ատիկա չէ:

—Հապա ի՞նչ է:

—Ձե՛նք կրնար անոնց առաջարկել որ ետքէն տալիք երեստեսէներն թող մէկ ոսկինոց բան ըլլայ և կամ չըլլայ. միայն թէ խօսք—կապը 20—30 ոսկինոց ըլլայ:

—Տէր ոգորմեա, տահա նէլէ՛ր... նոր օրէ՛նք պիտի սահմանես:

—Խէքլիֆ մըն է պիտի ընենք:

—Պօշ տեղը ատանկ բան մը չըսուիր. ո՞վ խապուկ կընէ:

—Խապուկ չեն ըներ նէ՛ թող քէֆիլ մը ցուցընեն մեզի:

—Գէֆիլը ի՞նչ է. այլմ՝ սաթըմ կընենք կոր:

—Աղէկ ամա, ընելիք ծախքերնու համար այդչափ խօսք—կապը կամ տէրօլիթօն քիչ է:

—Ի՞նչ ըսել ուղեղդ չեմ հասկնար կոր:

—Հիմա կը հասկնաս. Գանի մը տարիներէ ի վեր կարգուելու ելնոյ կարգ մը պարոններ 2—3 ոսկինոց խօսք—կապով կը նշանուին կոր. աղջկան կողմը այդ խօսք—կապին վոտահելով, պարտք խարճ օժիտը կը չինեն. մէյ մ'ալ ինչ կը տեսնես. փեսացուն՝ կամ աւելի թրախօմայով ու կամ աւելի բարձր դասակարգէ աղջիկ մը գըտնելով առջի նշանածը երեսի վրայ կը ձգէ ու խօսք—կապէն ալ վաղ կանցնի կոր:

—Է ի՞նչ կըլլայ. խօսք—կապն ալ աղջկան կողմը կը մնայ եա:

—Կը մնայ ամա՛ օժիտն ալ սնտուկին մէջ կապուած կը մնայ. աղջկան խեղճ ծնողքը կը չը-

ւարին. ու եթէ ուրիշի տալու չեն՝ ան ալ «նշանը ետ ընելին պատճառ մը ունի» ըսելով մարդոցը կարողութենէն վեր թրախօմա կուլէ կոր. եթէ ագ թրախօման չի տան՝ թէ ճէհէղին մօտան պիտի անցնի և թէ աղջկան սիրտը պիտի կտորի, ուրկէ գէշ հետեանքներ կրնան ծագիլ. ու այսչափ յոգնութիւններուն և տանջանքներուն փոխարէն 2—3 ոսկինոց խօսք—կապ մը ձեռքերնին պիտի մնայ, ամենը աս չէ՛ մի:

—Նայինք մեր փեռացուն ալ ատա՛նկ պիտի ընէ:

—Ինչէն պիտնամ որ չպիտի ընէ. ես կուլեմ որ մեզի խօսք—կապ չի տայ, այլ հարուստ բայց պատուաւոր մէկը երաշխաւոր տայ, որպէս զի օժիտը պատրաստելնէս ետքը եթէ չառնէ՝ եղած ծախքը վճարէ: Գիտես ա՛, անցածները, անուանովը չըլլայ զէվզէկին մէկը երկու ոսկինոց խօսք—կապով մը հօրէ որը մնացած աղջկան մը ոտքը կապած էր, խեղճին մայրը պարտքով քիչ շատ օժիտ մը պատրաստելէ ետքը մէյ մ'ալ նախիս փեսացուն խօսք—կապէն վաղ անցնելով ուրիշի մը հետ ամուսնացաւ. այսօր այդ որը աղջիկը մօրկանը հետ սիւզէնիին ֆերիկէին տակ գիշեր ցորեկ արատուելով աշխատելու ու ճէհէղին համար եղած պարտքը հատուցանել դատապարտուած է. լեցուն սնտուկն ալ անկիւն մը քաշուած կը սպասէ...

—Վո՛ւյ չի հանդիսն հէմէն:

—Անանկ չէ՛ մի եա:

—Աճապա նշանտուք ընե՛նք կըսես:

—Հիմակուաններէն շատերը ատոր ալ բան մը կը յարմարցնեն կոր. հիւանդ է, սանկ է, նանկ է, բժիշկը հրաման չի տար կոր ըսելով նշանը ետ կընեն կոր:

—Էյ ճանրմ, ինտո՛ր ընենք. աշխարհքէն արթըլս Լմիլյէթը վերցա՛ւ մի:

—Վերցաւ Էա՛, վերցաւ. նշանածը չի ձգելու համար մեզի երաշխաւոր մը կը ցուցնէ, մենք ալ օժիտը կը պատրաստենք. ապա թէ ոչ՝ անանկ միւղէկէջ բանի մը համար այնչափ ծախքի տակ չեմ կրնար մտնել:

—Երթալով օրէնքներ կը ռահմանենք կոր, մեր ատենները ասանկ ատէթներ չի կար:

—Սեր ատենները թքածը լղող չի կար: Քանի որ բնութիւնները կը փոխուին՝ աս ատէթներն ալ փոխուելու են:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (2)

ՈՒՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՂԱՐԾԻՐ-ՄԱՄՈՒՆԸ)



Սակայն, ծանշնալէ ետք գրագետը, ճարտարօրէն ծածկուած ուրախութեան զգացումով մը, որոշած էր անոր հետեւիլ սրահներուն մէջ, ուր աճապարները պիտի տային իրենց ներկայացումները:

Իր առջեւ գացողէն չտեսնելի փորձելով հանգերձ, մահաշուք անձը կը ջանար սակայն չհեռանալ անկից: Պաշելու աստիճան մօտեցաւ անոր այն միջոցին ուր հըրաւիրեալները, ծնծղաներուն մեծագինոյ հնչիւններէն կոչուելով դէպի թատրոն կը խուժէին:

Այն ատեն օգուտ քաղելով ամբոխին փութկոտ շարժումէն, դաշոյնով մը անմիջապէս կտրեց հանեց լաքաէ հովահարը որ ֆօփ սպասաւորը կը կրէր իր մէջքէն կախուած:

Եւ այս գործը կատարելէ ետք, ետ քաշուեցաւ, տեղը տալով այն հետաքրքիրներուն որոնք զիրար կը հըրմշտէին աւելի ազէկ տեսնելու համար:

Այս տարօրինակ գողութիւնը անանկ ճարպիկութեամբ կատարուած էր որ ոչ ոք, ոչ իսկ այն անձը որ կողոպտուած էր, չէր նշմարած:

Նոյն վայրկեանին, համոզուած թէ ամենուն ուշադրութիւնը լարախաղացներուն դարձած էր, Լէնկ սըպրդեցաւ իր բարեկամներուն մէջէն՝ սփոփանքի հառաչով մը պարտէզ նետուելու համար, սիրազեղ ակնարկ մը ուղղելէ ետք դէպ իր կնոջ սենեակը, ուսկից քանի մը վայրկեաններ տակաւին կը բաժնէին զինքը:

Օտարականը որ աչքերէն չէր զատեր Սոլ-Պրոտէի ամուսինը, գողցուած հովահարն իր հագուստին աակ պահելէն ետքը, ինքն ալ փութանակի դուրս ելաւ սըրահին միւս ծայրէն, և ծառերուն ետին պահուածքով, ծառուղի մը թռնեց զուգահեռագիծ այն ծառուղիին զոր իր հիւրամեծարը կը հետեւէր երազելով:

Անշուշտ գիտէր որ հարիւր քայլ անդին երկու ծածկաները իրարու կը միանային կակառնի և հալուէի թաւուտներուն մէջտեղ:

Լուսավառութիւնները քիչ քիչ մարած էին. դարաստանը թանձր մութի մէջ թաղուած էր:

Ժամ մը ետքը, երեք արագ հարուածներ հնչեցին հարսանեկան յարկաբաժնին դրանը վրայ:

Այս նշանէն աղախները դուռը բացին և երեսներն քայրկելով ծածկայ տուին անոր որ իրրեւ տէր կը ներկայանար: Յետոյ դուրս ելան և դուռներն ետեւուն քոցեցին:

Ամենախորին լուրձին կը տիրէր վիշտին մէջ:

Մարգարիտներու գետին արձագանգներէն կրկնուող նաւավարներուն և գահաւորակիրներուն երգերը միայն կը լսուէին երբ անոնք իրենց տեղերը կը փոխադրէին Լէնկ-Թա-Վանկին հարսնեղները:

Բ.

Արիւնոս դրոշմը

Չինական տուները կարծուածին չափ ծիծաղելի չեն. ընդհակառակը. և եթէ այս երկրին ճարտարապետները շատ անգամ ծանր շինուածանիւթերը, քար և մարմար, պալատներու և տաճարներու համար միայն կը գործածեն, մասնաւորներու համար ալ կը շինեն գեղեցիկ շէնքեր որք մանաւանդ սքանչելապէս յարմարցուած են անոնց մէջ բնակող մարդոց բարքերուն և սովորոյթներուն համեմատ:

Այս բնակարաններ շատ քիչ անգամ մէկ յարկէ աւելի ունին և բաժնուած են երկու որոշ մասերու. այն մասն ուր տանտէրը կ'ընդունի այցելուները և այն մասն որ ընտանիքին միայն կը պատկանի, վասն զի չինացին որքան դիւրահաղորդ է գործերու մէջ, այնքան զգոյշ է իր ներքին կեանքին նկատմամբ:

Այս տուներուն գետնայարկը կը պարունակէ ծաշասրահը, խոհանոցը և բաղնիքը: Անոր առջեւ միշտ կը գտնուի սենեակ մը որ միմիայն սահմանուած է աման նախնիքներուն և ոգիներուն:

Այս ամենը ծով է, շքեղաշուք. բայց ամենէն աւելի իրենց կիներուն նկատմամբ է որ երկնային կայսրութեան յշտակները կ'արտայայտեն իրենց պերճանքի սէրը:

Ուստի գիւրին է հասկնալ թէ արաւթը զոր Լէնկ կահաւորել տուած էր իր մանկամարդ ընկերուհիին համար, վայելչութեան եւ փեղեցիկ ճաշակի տպար մը ըլլալու էր:

Գեղազարդ փոքր խուցերու շարք մըն էր իրարու ետեւէ, ուր հաճոյք զգացած էր հաւաքել ազգային կահաւորման բոլոր արտակարգութիւնները, բոլոր տարօրինակութիւններն իր տարօրինակ երկրին:

Ամենէն հրապուրիչն էր մանաւանդ ննջասենեակը. որ այդ առանձնոցին կեդրոնը կը գտնուէր և որ ծայրագոյն Արեւելքի մէջ ամուսնէն զատ ամեն մարդու առ-

ջեւ խստիւ գոցուած է: Մոզայիքէ գետինը անհետ կ'ըլլար թանձր, կակուղ եւ քաշմիրի հիւսուածքի մը պէս նրբին փողցի մը տակ. վարագոյրները գեղնագոյն ծանր մետաքսէ էին, որոց վրայ ասղնեգործուած էին պուտտայական գիցարանութեան ամենէն մտածածին հերոսները, եւ հասերը սանդաղի գրուագուած փայտէ էին որոց բոլոր կանուխահատէր միմեկորտը:

Սենեակին չորս բոլորը կը բռնէր կապոյտ աղուեւ սէնիով ծածկուած լայն բաղմոց մը: Հարկը թռչուններ կը թռչտէին իրենց ոսկեզօծ վանդակներուն մէջ, ամենէն հազուագիւտ տունկերը կը փթթէին կիտուացեալ յախճապակիէ սքանչելի թաղարներու մէջ: Եւ անկողին վրայ, որ երկու ոտք բարձրութիւն միայն ունի եւ մետաքսեայ մուշիկէ վարագոյրներով ծածկուած է, սընդուսէ երկու սնարներ նորապսակ ամուսին կը սպասէին:

Յետոյ, այդ անկողին վերէնը եւ պորփրէ սենդանի մը վրայ կը գտնուէր փղոսկրէ արկղիկ մը դրուագուած, զոր Սոլ-Պրոտէ բուն հետաքրքրութեամբ բացաւ երբ ընտանեացու իր սենեակին բոլոր ճոխութիւններուն հետ:

Արգարեւ խուփը վեր առնելուն պէս ուրախութեան աղաղակ մը արձակեց եւ պահ մը չլացաւ,

Մնաց որ, ամենէն աւելի յափրացած փարիզուհիներն ալ ոչ նուազ սքանչանք եւ ոչ նուազ հաճոյք պիտի զգային:

Անոր մէջ կային ոսկիէ գեղեցիկ ապարանջաններ, մարգարտայեռ մանեակներ, յասակաքարէ մեծ գլխասեղներ՝ վեր առնելու համար մազերը զորս մանկամարդ կիներն ալ իրաւունք չպիտի ունենար յաջորդ օրը երկաթ հիւսքերով ձգել իր ուսերուն վրայ, տոբոյն բուստէ բինդեր, հրաշակերտ հովհարներ եւ ուրիշ բազմաթիւ անգին գոհարներ:

Գալով սիրուն հարսին, որուն վարդապոյն եղունդներով փոքրիկ ձեռքերը կը խաղային այդ գոհարներուն հետ, հազիւ տասնըհինգ տարու աղջիկ մըն էր, թաւշանման մեծ աչքերով, գիւթիչ ժպիտով. վերջապէս պաշտելի իր միամիտ սրտապեղծ մներուն մէջ, իր յաջորդական սքանչանքներուն մէջ:

Երկար վայրկեաններ, բոլոր այս զարդերուն տեսքը մոռցունել տուաւ իրեն անգիտակից կոյսի բոլոր տարտամ սարսափները, եւ իր աղախիները զինքն ամբողջովին թողուցին իր նորանոր ուրախութիւններուն. բայց եկաւ վայրկեանն ուր անոնք իմացուցին թէ իր ամուսինն ընդունելու պատրաստուելու էր:

Ծանուցուած էր անոնց թէ հանգէսը պիտի վերջանար եւ թէ հարմուկները արդէն կը սկսէին մեկնիլ

Սոլ-Պրոտէ շիկնեցաւ եւ գլուխը ծռեց. սարսափով զգաց զինք պարուրող հազուատներէն մէկիկ մէկիկ հանուիլը, եւ շատ չանցած մինակ մնաց, գողահար, այդ խորհրդաւոր պատսպարանին մէջ զոր բիւրեղէ լամպար մը հազիւ կը լուսաւորէր, եւ ուր տարտամօրէն կը հասնէին նուագախումբին խաղերը եւ կէցցէները վերջին հանգիստեսներուն որք քանդանի լամպապայծառները կը ծափահարէին:

Յանկարծ, իր սենեակին տառաքին դրան վրայ լսեց երեք հարուածները, որոց նշանագութիւնն յայտնուած էր իրեն, եւ սիրտն սկսաւ ուժգնօրէն բաբախել:

(Շարունակելի)

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

1901 Յունվար 14 Կիրակի գիշեր ժամ 8 1/2

ԱՌԱՋՈՐԴՈՒԹԵԼՄԲ ՅՈՎՍԷՓ ՍԵՂԱՃԵԱՆԻ

Արսաֆոյ կարգի երեկոյք հայ Դերաս. խմբին

Ի Ն Պ Ա Ս Տ

ՏԻԳՐԱՆ ԳՕԼԷՄՃԵԱՆԻ

(Առաջին անգամ ըլլալով 25 անձերէ բաղկացեալ երգեցիկ խմբով պիտի ներկայացուի)

ԲԵՄՊԵ ԳԸԶ

Օրերա գօմիք երեք արարուածով պարախառն

ՍԵՎԻՅԵԼԻ ՍԱՓՐԻՉԸ

Զաւեշտ 2 արարուած

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՆՅԱԻ

Կալացի Արթ. Տ. Ղեւոնդ Քահանայի 1901 տարւոյ ընդարձակ օրացոյցը, նախորդ տարիներէ աւելի շահեկան ու հետաքրքրաշարժ տեղեկութիւններով: Գլխով յօրինողին, ի Կալաց (Ռուսմանիա) և կամ Ա. Զարպհանէլեան զրատունը ի վառնա: Գրածի փոխաբէն նամակագրոյժ ա կ'ընդունուի:

3—3

Печатница „Взаимость“ — Варна.